

կան) իրերի. գողութիւն իրարից, անյադարար ծխել, արբե-
ցութիւն: Շատ ծանօթ նկարագիր ենք կարգում և կարծես
թէ այդ բոլորը ոչ հեռի՝ Ռուսաստանում, Օկա գետի ափին է
կատարուում, այլ մեզ շատ մօտ, մեր հոգևոր դպրոցներում:

Միայն մի բան պակասում է գեղուցազրի մէջ. արդեօք
ի՞նչ սկզբունքներով առաջնորդուել է վարչութիւնը ամբողջ
տարին և ի՞նչ միջոցների զիմել յուղմունքները տարուայ մէջ
գտնուած պահելու համար:

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Աւստրո—Ունգարական կաթոլիկ եկեղեցու բարենորոգումեան ձգ-
տումները.—Աւստրո—Ունգարիայում, գլխաւորապէս Բոհեմիա-
յում և Մորաւիայում, գոյութիւն ունի հոգևորականների մի մի-
ութիւն, որը ըստ „Jahr“ № 6-ի ձգտում է իրականացնել հետեւեալ
կէտերը: Հռոմում աշխատել սլաւոնական կաթոլիկ եկեղեցու
օգտին հետեւալ արածութիւնները ձեռք բերել. ձիակատարու-
թեան մէջ սլաւոնական լեզուն մտցնել. իրաւունք ձեռք բերել
որ իւրաքանչիւր թեմ ինքն ընտրէ իւր եպիսկոպոսը: Նրեք սլա-
ւոնական թեմերում ձիակատարութիւնը սլաւորներէն է կա-
տարուում, և թոյլատրուած էր արդէն 1868 թուից:

Երուսաղիմից էլ այդ տեսակ ձգտումների մասին լուր
կայ: Այստեղ ևս դեռ 2 տարուց ի վեր սլաւոնները Հռոմից
պահանջում են, որ թոյլ տրուի ձիակատարութիւնը մայրենի
լեզուով ևս կատարել՝ բացի լատիններէնից: Այս ձգտումները ոչ
թէ միայն եկեղեցական, այլ և ազգային ու քաղաքական բնա-
ւորութիւն են կրում: Նոցա նպատակը պիտի լինի սլաւոնա-
կանութիւնը ազգային տեսակէտով զօրեղացնել:

Սահայն Պիոս X պապը այդ բանը չի ընդունում. երկու
տարի առաջ տեղի ունեցած խորիական, տալմաստական և
խրուատական եպիսկոպոսների համագումարը չէր կառկածում,
որ պապը ձիակատարութեան միութեան մէջ ոչ մի փոփոխու-
թիւն թոյլ չի տալ. ամեն մի ազգային ձիակատարութիւն մի
փորձանք է, և նկատուում է իբրև ազգային եկեղեցի ունենալու
ձգտումն, որով քիչ քիչ Հռոմից հեռանում են և նոյն իսկ
շատ սլաւոններ կամենում են այդպիսով ազգային, Հռոմից
բոլորովին անկախ եկեղեցի առաջ բերել:

Ունգարիայում էլ, առանձնապէս երիտառարդ հոգևորա-

կանութիւնը ձգտում է ձիսակատարութեան մէջ ունդարերէն լեզուն մտցնել: 280 եկեղեցիներում պատարագը ունդարերէն լեզուով է կատարուում: 1906 թ. դեկտ. 18-ին մի կոնգակ է հրատարակուած, որով թոյլ է տրուում ձիսակատարութեան մէջ հին սլաւոներէնը դործագրել մասնաւոր դէպքերում միայն. իսկ նոր սլաւոներէնի գործածութիւնը բոլորովին արգելուած է:

Սլաւոնական մասամբ էլ գերմանական կաթոլիկ կղերականները ծրագրի մի կէտն էլ կուսակրօնութեան վերացումն է (քահանաների վերաբերութեամբ), որ վերջնականապէս հաստատուած էր Ունդարիայում 1848 թուից: Վերջին ամուսնացած հոգևորականը մի քանի տարի առաջ Պրեսբուրգում մեռաւ:

Աւստրիական եկեղեցու կաթոլիկ եպիսկոպոսարանը 1906 թ. դեկտ. 11-ին շատիւներէն լեզուով մի ընդհանրական հովուական թուղթ է ուղղել կղերականութեանը, որով նա զգուշացնում էր «ըսարենորոգութիւնից» (Reformismus) կամ «նորոգութիւն»-ից (Modernismus), որոնք ինչպէս թոյն և վատ սերմեր վարակել են կղերականներից շատերին: Նորասէրները սեզում են, որ եկեղեցին իւր դոգմաները նոր փիլիսոփայական աշխարհայեացքների համաձայնեցնէ, եկեղեցու կազմութիւնը դիմոկրատական հիմունքներով կազապարէ և եպիսկոպոսական ընտրութեան մի այլ ձև մտցնէ: Միևնոյն ժամանակ կռիւ է մղում կուսակրօնութեան և եկեղեցական այլ կարգերի դէմ և սուր քննադատութեան ենթարկում եպիսկոպոսների կարգադրութիւններն ու դրութիւնները: Ամենից ցաւալին համարւում է այն, որ իրենք քահանաներն էլ լրագիրներ և տմոթերթեր են հրատարակում, որով ըմբոստ հոգի են դարթեցնում հեղինակութեան դէմ և անմիա նորութիւններ տարածում:

ԲՈՂՈՔԸԿԱՆ ԵԿԵՂԵՅՈՒ

Աւստրո-Ունգարիա. Վիեննայի բողոքական եկեղեցու գլխաւոր խորհրդի պաշտօնական ծանուցման համաձայն՝ 1906 թուին 4364 հոգի են մտել աւետարանական եկեղեցու գիրկը. զոցանից 3813 հոգի աւգսբուրգեան աւետարանական եկեղեցու գիրկն են մտել, իսկ մնացած 551 հոգին շեյուեռական բողոքական եկեղեցու գիրկը. ճշգրիտ վիճակագրական տեղեկութիւնները այս թուերն են տալիս:

Աւգսբուրգեան աւետարանական եկեղեցու գիրկն են մտել 1393 աղամարդ, 1424 կին, 614 երեխայ. իսկ շեյուեռական (Չուի-